



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

18 փետրվարի, 2014թ.

ք. Երևան

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրագրելման առաջին սեմինարը

2014 թվականի փետրվարի 26-ին ժամը 14.00-ին, Արարատ քաղաքում (հասցե՝ ք. Արարատ, Շահումյան 24 ա, հանդիպումների սրահ) տեղի կունենա «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրագրելման առաջին սեմինարը:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ներին և ՋԼՄ-ներին կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրները առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Միջոցառման շրջանակներում ծրագրի ղեկավարը կներկայացնի «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը, դրա նպատակը և ուղղությունները:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես կգա «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավարը՝ համակարգող/փորձագետ Տիգրան Մաթևոսյանը: Այդուհետև կհաջորդեն Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժնի ղեկավար, դոկտոր Դիրկ Լորենցի և «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Ջաղոյանի ողջույնի խոսքերը:

Միջոցառմանը կմասնակցեն ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագրել է, իսկ նրա իրավունքները պաշտպանված:

Ինֆորացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Ծրագրի հանրային կայքերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.ayla.am>:

Կատարող՝ Նարինե Կարապետյան, Էլ.փոստ՝ pr@ayla.am:



| Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա | Ինֆորացիայի ազատության կենտրոն | Ծրագիրը ֆինանավորվում է Եվրոպական միության կողմից | Եվրոպական միության գործադիր մարմինը Եվրոպական հանձնաժողովն է: |
|--|--|--|--|
| Հասցե՝ Նալբանդյան 7, քն. Երևան, Հայաստան, 0010 | 2 Հասցե՝ Բուզանդի 1/3 Երևան, Հայաստան, 0010 | Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն | «Եվրոպական միությունը կազմված է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար իրար կապել իրենց նորարարական մերուժը, ռեսուրսները և ապագան: Ընդարձակման 50 տարիների ընթացքում նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի, պահպանելով մշակութային բազմազանություն, հանդուրժողականություն և անհատական ազատությունները: Եվրոպական միությունը միտված է իր ձեռքբերումներն ու արժեքները կիսել իր սահմաններից դուրս պետությունների և ժողովուրդների հետ»: |
| Հեռախոս: +37410 54 01 99 Հեռապատճե: +37410 58 02 99 | Հեռախոս: +37410 56 03 60 Հեռապատճե: +37410 56 03 60 | Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն Հեռախոս +37410 54 64 94 Հեռապատճե +37410 54 64 95 | |